

ՄԻ ԶՈՒԳԱՆԵՌ ԳՐԱԲԱՐԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՄԻՋԵՎ



եզուն ենթակա է մշտական փոփոխությունների, ընդ որում փոփոխվում է ոչ միայն բառապաշարը, այլև քերականական կառուցվածքի փոփոխությունը շատ ակնբայն է թե՛ հետադարձ և թե՛ մոտիկ անցյալում: Այս դրույթի բացահայտ ճշմարտացիությունը հաստատող բազմաթիվ փաստերի ենք ականատես մեր լեզվի պատմության մեջ: Այսպես, 13-րդ դարից մնացած մի ձևապարհի մեջ առհասարակ բառարանում հանդիպում ենք մի շարք բառերի, որոնք դուրս են բնկել հայ լեզվի բառային ֆոնդից և փոխարինվել նոր բառերով: Գրանցից են մարամիտ (անմիտ), նուրատան (ծածկոյթ), շուխափել (փութալ), պատգա՜ (հանդարտ), առ ոգ (ուսում), անպարթժ (անգոյարար), անգուրդ (վճար), անքոյ (տնանկ), անիմակ (անընկեր), արքողատ (գծուծ), ասակից (խօսակից), աստանութիւն (խաւարային), ապաւարտ (մարտիր), ագոր (բարձրութիւն), ահար (ամուսնութիւն), ակաղիմական (հակառակ), բասզան (հմուտ), բացձուն (հպարտութիւն), բարով (զօրավար), ցամ (հոտ), ցամնոտիլ (հոտիլ), ցապաք (ապաքէն), փարագծաղ (հիմնադիր), փարթուր (զոնեա), նքողեալ (սովեալ), ծխոյել (պատուհան), բակերտել (հաւասարել), բաքացեալ (զօրացեալ), ստորիւր (փողոց), ծրդել (ներկել), ծփոց (խնոցի), համոռն (միանգամայն), համշիրակ (կաթնակից, ուսումնակից), փիպել (պատմել), փաղանուն (բազմանուն) և այլն:

13-րդ դարում հայտնի է վարդան վարդապետը (կոչվել է մեծ), որը Կիլիկիայի հայոց Հեթում թագավորի պատվերով գրել է քերականության մեկնություն այս վերնագրով՝ «Յաղագս մեկնութեան քերականին,

զոր արարեալ է մեծ վարդապետին վարդանայ ի խնդրոյ թագաւորին Հայոց Հեթումոյ»:

Քերականության մեկնության սկզբում գետնեղված է Թրակացու թարգմանության հայերեն ղեկավարմունելի բառերի բառարանը: Բառարանը կազմված է ոչ թե այբբենական կարգով, այլ խառն, սկսած առաջին էջից և պարունակում է 194 բառ: Բառարանը կրում է այսպիսի վերնագիր՝ «Մեկնութիւն բառից քերականին»: Բերում ենք մի քանի օրինակ.

- տրամադրեալ—փոփոխեալ
- բաղաբ—պատճառք
- անբաղաբ—անպատճառ
- ներկուռ—բառ կուռ, կիրթ, վարժ
- բառ ներգոյս—բառ ի ներքս գոյոյ
- վերծանելի—ընթեռնելի
- բառ ենթադատութեան—բառ քննութեան
- անգայտ—որ երկոքին կարձ են
- ստեղն—մէջ
- վերջատանջ—որ վերջն երկայն է
- արամախոհ—ճշմարտախոհ, մտածարար, մտածօրէն
- արուորագոյն—բաջագոյն
- նենթակայումն—պատահումն
- եղ առ մու—մի առ մի
- նմանասէր—նմանազգի
- ներբակառեալ—ընդ ստացողին առեալ
- հակակայ—ընդդիմակայ
- կոնք—ստուար
- տարորոշ—բաժանեալ
- ասանութիւնք—ասմունք, ասնուլ, ասել
- ըմբաղդատութեամբ—առանց համեմատութեան
- դատումն—ընտրութիւն, քննութիւն
- անվթար—անբասիր, անսխալ
- եզ—մի
- ենթանկեալ—ընդ անուամբ անկեալ

բազմաձայնական — համեմատական
 ս՞ր, ս՞ր գան — ս՞ր պէս
 ս՞ր պակ — ս՞ր քան
 հի՞ կէն — հի՞նչ կէն
 հի՞ բար — հի՞ բր
 հի՞ գան — ս՞ր տարագ կամ ս՞ր պէս
 ս՞ր գոն — ս՞ր գունակ
 ս՞ր կէն, ս՞ր պակ — ս՞ր պէս
 ս՞ր շան — ս՞ր շափ
 բազմանակ — բազմաբար
 կլագանել — կուցանել
 ամանակ — նուազ մասն ժամանակի
 շաղաշար — շարժեցելոց
 արագեղ — սրագնաց¹ և այլն:

№ 2374 — 2371 ձեռագրում, բացի Թրա-
 կացու քերականության բառարանից, զե-
 տեղված է նաև հայերենից հայերեն և եր-
 բայեցեցեանից հայերեն բառերի բառարան:
 Հայերեն բառարանը հետաքրքրական է նրա-
 նով, որ նրա մեջ պարունակվող շատ
 բառեր չբացել են արդևն մեր արդի բառա-
 լին ֆոնդից: Այսպես՝

տնելի — այն էլ
 տորգք — մամուլք
 տոշկել — ողորկել
 տինա — իսկ նա
 տոխարակք — գերազանցեալք
 տեղեախն — զուլա իմաստասիրաց
 ձախ — մացառ
 ձամ — հոտ
 ձանդ — յաւէտ
 բախարար — ուրախարար

Ուշադրով է № 7117 ձեռագրի հայերեն
 բառարանը, որի անձանոթ բառերը գործա-
 ծույթունից դուրս են եկել, իսկ զրանց մեծ
 մասի բացատրությունը հանդիսացող բառե-
 րի մեծագույն մասը գործածական են մեր
 արդի հայերենում: Բառարանը կազմված է
 այբբենական կարգով: Նմուշի համար բե-
 րում ենք հետևյալը.

առած — արհեստ
 առաջոյն — առաջին
 առաթուր — առ ոտն կոխել
 անգուրդ — վճար
 անբոտ — տնանկ
 անկոէն — թերազարձ
 արգանակ — ճարպ սպաս
 բաժ — մասն
 ծիծանակ — խայտառակ
 ծմբել — տխրել
 կածել — գորշմել
 շայքել — յորդորել
 շականջիլ — ի վերայ կալ մտօք և լսել
 շաղապատել — պատտուել

նհանջել — յեսա դարձուցանել
 ներշնչանակ — ուսումնական
 պարէտ — տեսուչ
 պատանի — որ ի նորայ կարգի է, թէպէտ
 և երիտասարդ է

բապազ — նուազ
 բապէ — աշխարհ
 բուպէից — մասանց
 բուճանակ — աւտաւար
 ցամնտախլ — հոտիլ
 ցանդ — միշտ, հանապազ
 ցանդ նախարուզ — մշտագնացաւ
 ցիծին — շոր
 ցի — ձիրս
 ցովիլ — երեկ, բերկրել
 փոթ — նիւթ
 փոն — թոյնք
 փունանձուձ — ցնորումն, պակուցումն
 փորանձեալ — զգայ լինին
 փութ — հպարտութիւն
 փութազանք — սևոր ազանց
 փաղփաղել — փայլել
 փաղասէր — բազմասէր
 փաթուր — զետ
 փատողանալ — բարձրանալ
 փասկալ — փախուստ
 փարահ — պատասխանի
 ի դէպ — ի նահ, յանդ, նման և այլն

Գրաբարը թե՛ իր կազմավորման շրջանում
 և թե՛ իր զարգացման հետագա էտապներում
 իր մեջ ընդունել է բազմաթիւ բառեր ու հա-
 բրատացրել հայերենի բառային ֆոնդը թե՛
 նորաստեղծ և թե՛ օտարամուտ, փոխառյալ
 բառերով: Հայ ժողովուրդը դարեր շարունակ
 բաղաբական, տնտեսական, կուլտուրական
 փոխհարաբերությունների մեջ է գտնվել իր
 հարևան ժողովուրդների՝ վրացիների, աբըր-
 բեջանցիների, ինչպես և օտարների՝ պար-
 թիկների, պարսիկների, հույների, հոմալի-
 ցիների, արաբների, ասորիների և ուրիշների
 հետ: Այդ փոխհարաբերությունների հետե-
 վանքով դրաբարի մեջ մտել են բազմաթիւ
 արմատներ, բառեր, արտահայտություններ և
 նոխացրել հայ լեզուն: Լեզվի հարստացումը
 կատարվել է նաև փոխառություն և թարգմա-
 նական գրականության միջոցով:

Գրաբար լեզվով թարգմանվում է Աստվա-
 ծաշունչը անմիջապես գրերի գլուստից հետո,
 այնուհետև ասորերենից և հունարենից
 թարգմանվում են կրոնական բնույթի գրքեր,
 ինչպես և շարադրվում են ինքնուրույն ստեղ-
 ծագործություններ: Աստվածաշնչի ու կրոնա-
 կան գրքերի թարգմանությունը դրաբար լեզ-
 վով վկայում է, որ այդ լեզուն հասկանալի է
 եղել հայ ժողովրդին դեռ 5-րդ դարում: Իսկ

1. Հայկական ՍՍԻՔ-ի հետ. մասնակ. ի նկատ. № 2374 —
 2371, Թ. Թ. 1 — 7:

կթև գրաբարը հասկանալի է եղել բովանդակ հարուստան համար, այդ նշանակում է՝ նա չի հանդիսացել բարձր խափի լեզուն, հետևաբար դասակարգային լեզու չի հանդիսացել ու չի սպասարկել միայն մի դասակարգի: Սակայն այդ չի նշանակում, թե հայ գերիշխող դասակարգն անտարբեր է եղել լեզվի նկատմամբ և որևէ եղանակով չի արտահայտել իր ազդեցությունն այդ լեզվի վրա:

Պարզ է, որ հեթանոսության և քրիստոնեության ժամանակաշրջանում գրական հայերենի մեջ մուտք են գործել ժամանակաշրջանի կենցաղը, աշխարհըմբռնումը գրականորդ բազմաթիվ արտահայտություններ: Այդպիսի բաներ կարող էին լինել եկեղեցի, Բրիտոնեկոսիան, տանաբ, նախաբաբ, նահապետություն, իշխան, մարգպան, հագաբապետ աշխարհի, կարողիկոս, եպիսկոպոս, Բանաստեղծություն, գեղարվեստ, արագանի, բանաուբ հոտ, դաս Բանաստեղծություն: Այս բաները մուտք գործելով լեզվի մեջ, շեն փոխում գրաբարի քերականական կառուցվածքը, այլ գործածվում են պահպանելով լեզվական միջնակ այդ գոյություն ունեցող կառուցվածքը՝ բայական, գոյական ձևերը, միայն երբ նոր բաները մուտք են գործում լեզվի մեջ, այդ ժամանակ նրանց տեղի են տալիս և դուրս են ընկնում հին, նախաքրիստոնեական շրջանի բաները, ինչպես են Բուրմ, մեհյան, արձան Անահտի, Միհր, Աստղիկ, ատրոշան, երգ ցցուց, հայր աստուածոց, դիցն օգնականություն, մատեան մեհեհից, վիշապագունե և համանման այլ բաներ:

Գրաբարին, որպես ընդհանուր լեզվի, առընթեր գոյություն են ունեցել նաև հայ բարբառները, այսինքն այն լեզուն, որն ընդհանուր հայ ժողովրդի լեզու չէր, այլ առանձին գավառամասերում ապրող ժողովրդի խոսակցական լեզուն:

Բարբառների գոյություն մասին վկայում են մեր մատենագիրները՝ Կորյունը, Նզնիկը, Անանուն մեկնիչը, Ստեփանոս Սյունեցին: Դրա հնագույն տեղեկությունը գտնում ենք Կորյունի մեջ՝ նա խոսում է Մարաց կողմերում բնակվող հայ ժողովրդի կոշտ ու կոպիտ լեզվի դժվարըմբռնելիության մասին:

«Յանժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխոժարութ կողմանան Մարաց, որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւղողութեան, այլ և վասն խեցրեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին»: (Այն ժամանակ թագաւորից շուտով հրաման առաւ՝ սկսելու [սովորեցնել] Մարաց կողմերը, որոնք դժվար մատչելի էին ոչ միայն իրենց դիվական, սատանայակիր, ճիւղագոյն բարքի, այլ և

խեցրեկագոյն և կոշտ ու կոպիտ լեզվի պատճառով»²:

Մարաց կողմերը, ինչպես բացատրում է սկադեմիկոս Մ. Արեղյանը, շարտի հասկանալ Մեծ կամ Փոքր Մարաստանը այլ Մասիս լեռան հյուսիս-արևելյան կողմերից սկսած. նրախ գետի երկու կողմերը, Եարուրի դաշտից մինչև Նախալան, նրամ և Զուղա և այլն («Վարք Մաշտոցի», էջ 207, ծանոթ. 55):

Ստեփանոս Սյունեցին, Գիտնիսիոս Բրակացու քերականության հայերեն թարգմանություն մեկնիչը, որ ապրել է 8-րդ դարում, հիշատակում է 7 բարբառի սովորությունն իր օրով. դրանք են՝ Կորճայքի, Տայքի, Խուբի, Չորրորդ Հայքի, Սպերի, Սյունիքի և Արցախի. իսկ նույն Բրակացու մի ուրիշ մեկնիչը՝ Անանունը հաղորդում է «բազում» բառի բարբառային արտաբերումները՝ «բագուն, պագուն, փագուն»: Բարբառային այս արտաբերումները (պագուն, փագուն) էական են արևմտահայ լեզվին և գոյություն ունեն մինչև այսօր:

Սովետական հայ լեզվաբանության մեջ կանթադրություն, թե գրաբարի անկումը սկսվում է 7-րդ դարից և տևում է մինչև 11—12-րդ դարը: Մեկ թվում է, որ ճիշտ չէ 11—12-րդ դարը սահմանել գրաբարի անկման վերջակետ, որովհետև 12—16-րդ դարերում ունենք բազմաթիվ գրական արտաբերություններ գրաբար լեզվով: Անգամ 17-րդ դարում հայ պատմիչ Առաքել Դավրիժեցին իր պատմությունը գրել է գրաբար. էլ շենք խոսում Մխիթարյանների մասին, որոնք 18—19-րդ դարերում հսկայական գրական ժառանգություն (ինքնուրույն և թարգմանական) թողել են գրաբար լեզվով: Անժխտելի է, որ 12-րդ դարից գրաբարին զուգահեռ հրապարակվել են գրական արտաբերություններ գրված ոչ «մաքուր» գրաբարով, այլ «բարբառային հիմք ունեցող հայերենով»³:

Բայց դա չի կարող հիմք ծառայել ստելու, թե «11—12-րդ դարերում գրաբարն արդեն հասել էր մեռած, քարացած վիճակի, երբ 11—12-րդ դարերում մեր ձեռքի տակ կա հսկայական գրականություն գրաբար լեզվով: 19-րդ դարի 60-ական թվականների ժամանակաշրջանում սրված պայքարը գրաբարի և աշխարհարարի շուրջը վկայում է, որ գրաբարը, որպես ընդհանուր գրական լեզու, 11—12-րդ դարերում դեռ չէր «մեռել»: Չի կարելի սահման դնել, թե այս կամ այն ժամ-

2. Կորյուն, «Վարք Մաշտոցի», թարգմ. պրոֆ. դոկտ. Մ. Արեղյանի, Նրեան, 1941 թ., էջ 55:
 3. Ս. Ա. Աբրահամյան, «Գրաբարի ձևերի», Հայկական ՍՍԻ Պետական հետազոտությունների և հրատարակություն, Նրեան, 1952 թ., էջ 15:

կետում մի լեզու չբանում է, մեռնում է և նորան հաջորդում է մի ուրիշը: Լեզվի, այս զեպրում գրարարի, փոփոխությունը և զարգացումը տեղի է ունենում անդադար, մինչև որ նոր ձևերը և արտահայտությունները իշխում են լեզվի մեջ և փոխում նրա նախկին կերպարանքը: Մեր սասածը հաստատվում է 13-րդ դարի ուղղագրական մի բառարանից բերած հետեյալ օրինակով.

«Քէ ս՛ յբ են առանց յիւյ բտեաւեն = ճգնեա, թագաւորեա» («Քէ սրո՛նք են յ շուհնցող բտեաւը = ճգնեա, թագաւորեա»⁴).

«Քէ ս՛ յբ են բտեաւեն սյբ յի առնուն ի վերջան = արգարացայ, ձանձրացայ, ընթացայ» («Քէ սրո՛նք են այն բտեաւը, որոնք վերջում ստանում են յ = արգարացայ, ընթացայ»⁵).

Այս եւր հոգնականացուցիչը նույն դարի մի ձեռագրում (№ 2374—2371) արդեն դարձել է եւ: Օրինակ՝ «Վասն սեւոյ սր անպատճառ յի ունի զկնի = առարկոյ, ասնկոյ, արծաթոյ» (էջ 90): «Վասն նոյն կատարեալ բանեոյ որ յամենայն տեղիս անսխալ և անպատճառ ասնուցուն զկենդանական յիւեաւն = առհասարակայ, ճրեայ, հայերեն, հայ ազգ, հայ մարդ» և այլն (էջ 93): «Վասն նոյն կատարեալ յիւեոյ որ անփոփոխը մն և անշարժ... ապրեցայ, արգարացայ» և այլն (էջ 94): Ձեռագրի հեղինակը Արիստակես զբիշն է, որը կազմել է ուղղագրական բառգիրք և այբբենական կարգով դրել բառերի ուղղագրությունը:

Բերած օրինակից պարզվում է, որ 13-րդ դարում գոյություն է ունեցել գրարարը. հարկավ, 5-րդ դարի գրարարը չէ, որովհետև 700 տարվա ընթացքում գրարարը ճեթարկվել է փոփոխությունների, և այդ փոփոխությունները կատարվել են աշխարհարարի տարրերի աճման և ուժեղացման ուղղությամբ գրարարի մեջ, մինչև որ 18—19-րդ դարերում արդեն գրական լեզուն հանդես է գալիս որպես աշխարհարար լեզու, բայց ոչ լիովին ազատագրված գրարարյան ձևերից:

Հետևելով գրարարի մեջ տեղի ունեցած փոփոխություններին, նկատում ենք, որ 13-րդ դարում որպես հոգնականացուցիչ մասնիկ գրական հայերենում գոյություն են ունեցել Բ, Եւր, Եւ մասնիկները: Սրանցից Եւր-ը վերածվել է Եւ-ի և շրջակա հաջորդ դարերում: Բ հոգնականացուցիչը դիմացկուն է եղել և շարունակել է ապրել Եւ-ին զուգահեռ մինչև 19-րդ դարի 60-ական թվականները: 20-րդ դարում արդեն Բ-ն դուրս է բն-

կել և իր տեղը զիջել եւր կամ նեւ հոգնականացուցիչներին:

Գերանվանական եոճա, սոճա, եոցա, սոցա, եուանից, սուանից և այլ գրարարյան ձևերը զեռ իշխում էին 1900—1915 թվականներին. սրանք փոխարինվում են եւանեւրանց, եւանցից, սւանեւ, սւանց, սւանցից և այլ ձևերով և շրջանում արդի հայերենից:

Գրերի հնչյունափոխությունը արդի հայերենի և հին հայերենի մեջ նույնն է: Քե՛ գրարարում և թե՛ աշխարհարարում բառի սնման զեպրում շեշտի ազդեցության տակ՝ ույ-ը (ույ) դառնում է ու. օրինակ՝ լույս—լուսանալ, յույս—յուսալ, բույս—բուսական.

Ի ձաճավորը դառնում է ր, բայց չի զբրվում. օրինակ՝ թուղթ—թղթոյ (թղթի), շուր—շրոյ (շրի).

Կ ձաճավորը դառնում է ի. օրինակ՝ դէտ—դիտել, Մոսկէս—Մոսկոսի, սէր—սիրոյ, սիրել և այլն.

Կայ երկրարբարը դառնում է է. օրինակ՝ պաշտօնեայ—պաշտօնէի, պաշտօնէական, հրեայ—հրէի, հրէական.

Եւ երկրարբարը դառնում է ե. օրինակ՝ առեան—ատենի, ատենակալ, մատեան—մատենի, մտտենազարան և այլն:

Հոլովման մեջ սեռականը դարբարում և աշխարհարարում մեծ մասամբ նույնն է. տարբերությունն սկսվում է եզակի հայցականից և պահանջվում դիտավորակա բացական, զործիական ու ներդրյական հոլովներում: Հոգնակի թվում աշխարհարարը մեծ մասամբ ասորեւ է գրարարից: Այսպես՝

Եւան հոլովումը նույնն է գրարարում և աշխարհարարում. օրինակ՝ գալուստ—գալլուստեան, գալստեամբ. փախուստ—փախստեան, փախստեամբ. բաշտիլին—բաշտիլեան, բաշտիլեամբ. գրուիլին—գրուիլեան, գրուիլեամբ: Աշխարհարարում նկատելի է սեռականի եւան հոլովածևի անկում և նրա փոխարինումը իւնի (յունի) հոլովածևով, իսկ զործիական հոլովման մեջ կամը վերջավորության փոխարինումը իւնով (յունով). օրինակ՝ Հարուիլին—Հարուիլինի, Հարուիլինով (փոխ. Հարուիլեան, Հարուիլեամբ) և այլն:

Ի հոլովման մեջ եզակի սեռականը և տրականը նույնն են գրարարում և աշխարհարարում, մնացած հոլովները տարբեր են, իսկ տարբերությունն սկսվում է եզակի բացականից. սիրա—սրտի, սրտից—ի սրտէ, սիրտք—սրտեր. ձայն—ձայնի և այլն: Գործիական և-ն հիշեցնում է այդ հոլովածևի նմանությունը. սրտիս—սրտով, ձայնիս—ձայնով և այլն.

Ան հոլովման մեջ գրարարի ու աշխարհարարի սեռականն ու տրականը նույնն են, բայց նույնը չեն եզակի բացականը, գոր-

4. Հայկական ՍՍԲ Պետ. մատեն.-ի ձեռ. № 1117, ք. 185:
5. Նույն տեղում, ք. 187:

ծխականը և բոլոր հորովածները հոգնակիրում: Օրինակ՝ տուն—տան, եղն—եզան, զեկուցումն—զեկուցման. բայց՝ տնից—ի տանէ, տներ—տունք, տների—տանց, տներով—տամբք:

և հորովման մեջ աշխարհարարում կորել է գրաբարյան ձևը և ն հորովիչը փոխարինվել է ի հորովիչով (արտաքին թեքման): Օրինակ՝ աղբիւր—աղբիւր (գրաբար), աղբյուր—աղբրի (աշխարհարար), կայսր—կայսեր (գրաբար), կայսր—կայսրի (աշխարհարար), բայց իբրև ածական՝ կայսերական (աշխարհարար):

ու հորովման մեջ սեռականը և տրականը նույնն են, բայց տարբեր են եզակի բացառականը, գործիականը և հոգնակի թվի բոլոր հորովները: Օրինակ՝ գանձ—գանձու, (գրաբար); գանձերի (աշխարհարար), գանձուք (գրաբար), գանձերով (աշխարհարար): ու հորովումը աշխարհարարում պահպանվել է ի վերջավորված բառերի մեջ, որոնք գրաբարում եզակի սեռականում և տրականում ունեն ոչ հորովիչը: Ինչպես երևում է, գրաբարի ոչ հորովիչը աշխարհարարում փոխարինվել է ու հորովիչով. օրինակ՝ մորենի—մորենույ (գրաբար), մորենի—մորենու (աշխարհարար), գալ—գալոյ (գրաբար), գալ—գալու (աշխարհարար) և այլն:

օր հորովման մեջ թե՛ գրաբարում և թե՛ աշխարհարարում եզակի տրականը և սեռականը նույնն են, եզակի թվի բացառակա-

նը երկսի մեջ կազմվում է տրականից, իսկ եզակի գործիականը և հոգնակի թվի բոլոր հորովները գրաբարում բուրբովին տարբեր են: Օրինակ՝ եղբայր—եղբոր (գրաբար և աշխարհարար), հայր—հոր, բայց ի հորէ (գրաբար), հորից (աշխարհարար), յեղբորէ (գրաբար), եղբորից (աշխարհարար) և այլն:

ոչ հորովման մեջ եզակի թվի սեռականը և տրականը նույնն են գրաբարում և աշխարհարարում, իսկ եզակի բացառականը և գործիականը և հոգնակի թվի բոլոր հորովները տարբեր են իրարից: Օրինակ՝ կին—կնոջ, կանայք—կանանց (գրաբար և աշխարհարար), ի կնոջէ—կնոջից, կանամբ—կնոջով և այլն:

Այսպիսով գոյականների հորովման մեջ աշխարհարարում պահպանվել են միայն եզակի թվի սեռականի և տրականի հին, գրաբարյան հորովական վերջավորությունները, իսկ մնացած բոլոր հորովներից շքացել են գրաբարյան ձևերը և փոխարինվել նոր հորովական ձևերով: Գրաբարի հոգնակի թվի հորովական բազմազան ձևերը շքացել են և աշխարհարարում վերածվել են մեծ մասամբ ի հորովման:

Համանման երևույթ նկատում ենք դերանունների հորովման և բայերի խոնարհման մեջ:

Գերանունների հորովման մեջ տեղի է ունեցել հետևյալը.

գ ր ա բ ար

ա շ խ ա ր ք ա ր

	ուղղ.	սեռ.	տրկ.	բցո.	գրծ.
եզակի	ես	իմ	իճձ	ի՛նէն	ի՛նև
հոգն.	մեր	մեր	մեզ	ի մէնջ	մևք
եզակի	դու	քո	քեզ	ի քէն	քև
հոգն.	դուք	ձեր	ձեզ	ի ձէնջ	ձևք
եզակի	սա	սորա	սմա	ի սմանէ	սովաւ
հոգն.	սարա	սոցա	սոցա	ի սոցանէ	սոքօք

	ուղղ.	սեռ.	տրկ.	բցո.	գրծ.
ես	իմ	իճձ	ի՛նձնից	ի՛նձնով	
մերք	մեր	մեզ	մեզնից	մեզնով	
դու	քո	քեզ	քեզնից	քեզնով	
դուք	ձեր	ձեզ	ձեզնից	ձեզնով	
սա	սրա	սրան	սրանից	սրանով	
սրանք	սրանց	սրանց	սրանցից	սրանցով	

Անձնական դերանունների հորովման մեջ նույնն են եզակի և հոգնակի թվերի սեռականը և տրականը. շեղումն սկսվում է եզակի թվի բացառական հորովից, իսկ ցուցական դերանունների հորովման մեջ եզակի թվի սեռականում և տրականում դուրս է ընկել ո ձայնավորը: Բոլոր դեպքերում բացառականը և գործիականը կազմվել են տրականից (թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերում):

Նույնանման պատկեր տեսնում ենք բայերի մեջ:

Գրաբարում և աշխարհարարում անորոշ գերբայները հորովվում են միայն եզակի

թվով (դրել—դրելոյ, գրելու) իսկ անցյալ դերբայները հորովվում են թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերով (տեսեալ—տեսելոյ, տեսելոց. տեսած—տեսածի, տեսածների):

Ներկա կամ ենթակայական դերբայները գրաբարում և աշխարհարարում ունեն միատեսակ վերջավորություն՝ ուլ, իչ և հորովվում են թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում: Այստեղ նույնպես նմանությունը եզակի սեռականի և տրականի մեջ է: Գրաբարում հորովվում է ի—ա խառն հորովմամբ, իսկ աշխարհարարում՝ ի պարզ հորովմամբ: Այսպես՝

		Ի ր ա ր ա ր		ա շ խ ա ր ն ա ր ա ր	
Եզակի	ուզղ.	նեզիչ	յազթոզ	նեզիչ	հազթոզ
	սեռ. արկ.	նեզչի	յազթոզի	նեզչի	հազթոզի
	բզո.	ի նեզչէ	ի յազթոզէ	նեզչից	հազթոզից
	զրծ.	նեզչաւ	յազթոզաւ	նեզիչով	հազթոզով
Տողնակի	ուզղ.	նեզիչք	յազթոզք	նեզիչներ	հազթոզներ
	սեռ. արկ.	նեզչաց	յազթոզաց	նեզիչների	հազթոզների
	բզո.	ի նեզչաց	ի յազթոզաց	նեզիչներից	հազթոզներից
	զրծ.	նեզչօք	յազթոզօք	նեզիչներով	հազթոզներով

Ընթակայական դերբայների ձևափոխության օրինաչափությունը նույնն է, ինչ որ գոյական անուններինը: Աշխարհարարում պահպանվել են եզակի սեռականի ու տրականի նույնությունը գրարարի հետ, իսկ շրացել են եզակի բացասականի, գործիականի և հոգնակի թվի բոլոր հոլովական գրարարյան ձևերը և նրանք փոխարինվել են ի պարզ հոլովման ձևերով:

Համանման երևույթ կարելի է նշել նաև բայերի խոնարհման մեջ: Որոշ ձևեր չբացել են և փոխարինվել նորերով, իսկ որոշ ձևեր շարունակում են պահպանվել աշխարհարարում:

և խոնարհման ժամանակ բայի ներկան և անցյալ անկատարը նույնն են, միայն աննշան տարբերությամբ:

Ե ր կ ա ժ ա մ ա ն ա կ		ա շ խ ա ր ճ ա ր ա ր	
զրարար		զրարար	
եմ	եմք	եմ	եք
ես	էք	ես	էք (էք)
է	են	է	են

ա ն ց յ ա լ ա ն կ ա տ ա ր		ա շ խ ա ր ճ ա ր ա ր	
զրարար		զրարար	
էի	էար	էի	էիք
էիր	էիք	էիր	էիք
էր	էին	էր	էին

Տարբերությունը ներկա և անկատար ժամանակների հոգնակի առաջին դեմքի մեջ է, իսկ մյուսները նույնն են:

Այս օժանդակ բայաձևերը գրարարում հանդես են գալիս միացած, կցված բայարմատին, իսկ աշխարհարարում՝ անջատ են. Օրինակ՝

Ե ր կ ա ժ ա մ ա ն ա կ		ա շ խ ա ր ճ ա ր ա ր	
զրարար		զրարար	
զր-եմ	զր-եմք	զր-ում	զր-ում եք
զր-ես	զր-էք	զր-ում	զր-ում եք
զր-է	զր-են	զր-ում	զր-ում են

ա ն ց յ ա լ ա ն կ ա տ ա ր		ա շ խ ա ր ճ ա ր ա ր	
զրարար		զրարար	
զր-էի	զր-էար	զր-ում	զր-ում էի
զր-էիր	զր-էիք	զր-ում	զր-ում էիք
զր-էր	զր-էին	զր-ում	զր-ում էին

ա խոնարհման մեջ գրարարյան խոնարհման ձևերը դուրս են ընկել և փոխարինվել նույն ձևերով, ինչ որ տեսանք և խոնարհման

ներկա և անցյալ անկատար ժամանակների մեջ: Օրինակ՝ կարգալ, խաղալ, դարձանալ բայերը:

Ե ր կ ա ժ ա մ ա ն ա կ		ա շ խ ա ր ճ ա ր ա ր	
զրարար		զրարար	
կարգ-ամ	կարգ-ամք	կարգ-ում	կարգ-ում ենք
կարգ-աս	կարգ-այք	կարգ-ում	կարգ-ում եք
կարգ-այ	կարգ-ան	կարգ-ում	կարգ-ում են
ա ն ց յ ա լ ա ն կ ա տ ա ր		ա շ խ ա ր ճ ա ր ա ր	
զրարար		զրարար	
կարգ-այի	կարգ-այաք	կարգ-ում	կարգ-ում էինք
կարգ-այիր	կարգ-այիք	կարգ-ում	կարգ-ում էիք
կարգ-այր	կարգ-ային	կարգ-ում	կարգ-ում էին

Այստեղ գրաբարի և աշխարհաբարի նույնութունը դեմքերի վերջավորութեան մեջ է՝ ի, իր, ր, իք, ին (բացառութեամբ հոգնակի առաջին դեմքերի):

Գրաբարի ու խոնարհումը շքացել է, գրակ սն աշխարհաբարում ու խոնարհում գոյություն չունի:

Բայերի խոնարհման անցյալ կատարյալ ժամանակի որոշ ձևերը պահպանվել են աշխարհաբարի մեջ:

Նախ՝ և և ա խոնարհման բայերի անցյալ:

գրաբար

կարդաց-ի	կարդաց-աք
կարդաց-եր	կարդաց-իք
կարդաց	կարդաց-ին

աշխարհաբար

կարդաց-ի	կարդաց-ինք
կարդաց-իր	կարդաց-իք
կարդաց	կարդաց-ին

Համանման երևույթ կարելի է նկատել նաև բուն հրամայականի և արդելական հրամայականի կազմության մեջ: Այսպես՝ բուն հրամայականը կազմելիս բայերի համար հիմք բնդոնում ենք անցյալ կատարյալի և-

կատարյալի հիմքը (ատրիստի բունը) թե՛ գրաբարում և թե՛ աշխարհաբարում ցո-ական է: Այսպես՝ կարդալ—կարդաց, գրել—գրեաց, գրեց: Գրաբարյան կատարյալի պարզ հիմքը (պարզ ատրիստը) աշխարհաբարում չկա, ուրեմն շքացել է որպես բայածև, որովհետև, ինչպես վերն ասվեց, ու խոնարհում չկա աշխարհաբարի մեջ:

Երկրորդ՝ դեմքի վերջավորությունները նույնն են երկսի մեջ, բացառությամբ հոգնակի առաջին դեմքի.

զակի թվի երրորդ դեմքը (որը կատարյալի հիմքն է), որը եզակիում ստանում է շեշտ, բնդոնում կորչում է ցո-ական հիմքից հընչումը, իսկ հոգնակիում նույն ցո-ական հիմքին ավելանում է է՛ հոգնականացուցիչը: Օրինակ՝

կատարյալի հիմքը—կարդաց, գնաց, թող.

հրամայական { եզակի—կարդա՛, գնա՛, թող՛.
 հոգնակի—կարդաց-է՛ք, գնաց-է՛ք, թող-է՛ք:

Արդելականի հրամայականը կազմվում է (գրաբարում և աշխարհաբարում) եզակի և հոգնակի թվերի երկրորդ դեմքից. եզակիում ստանում է ր վերջավորությունը, իսկ հոգնակիում՝ ք: Օրինակ՝ մի կարդա՛ր, մի՛ կարդա՛լ (գրաբարում, մե՛ կարդա՛ք, մի՛ կարդա՛լ): Թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում բա-

լից առաջ դրվում է մի՛ եզանակիչը (գրաբարում և աշխարհաբարում):

Քերականական կառուցվածքի նմանությունը հաստատույ բազմաթիվ ուրիշ փաստեր ևս կարելի է բերել գրաբարից ու աշխարհաբարից, սակայն բավարար ենք համարում այսբանը:

